Արձանագրություն N 4

ՀՀ դատական դեպարտամենտ պետական կառավարչական հիմնարկի կարիքների համար՝
«Վարչական շենքերի վերանորոգման աշխատանքների» ձեռքբերման նպատակով
կազմակերպված «ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԸԱՇՁԲ-01/16» ծածկագրով
պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «22» ապրիլի 2016թ.
Ժամը՝ 11:30

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Ավետիք Ավագյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ **ԳՊ/ԳԱՊ**), ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝

Աղավնի Բուդուլյան՝ (Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**), Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Կարեն Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**), Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

Կարեն Համբարձումյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**), Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Անահիտ Ավագյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**), Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

հանձնաժողովի քարտուղար՝

Մարիամ Հայրապետյան՝ (Գնման պատասխանատու /մրցույթի համակարգող՝ **ԳՊ/ՄԻՄ**) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

1. Տեղեկատվություն՝ մասնակիցների կողմից անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ.

1.1 <<Բիդեք>> ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է իր կողմից ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունը:

1.2 <<Մեվրիկար>> ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել իր կողմից ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունը:

1.3 <<ԳԱՄՇԻՆ>> ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է համապատասխան պարզաբանումներ:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տեղեկատվություն՝ բավարար և անբավարար գնահատված հայտերի մասին.

Հաշվի առնելով վերոգրյալը և ապրիլի 20-ի՝ հանձնաժողովի 3-րդ նիստի արձանագրության 1.2 կետը՝ և ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ՝ հանձնաժողովը որոշեց.

2.1 Բավարար գնահատել <<ԱՇԿԱՐ>> ՍՊԸ-ի, <<ՄարտՇին>> ՍՊԸ-ի , <<Հ.Պողոսյան>> ՍՊԸ-ի, <<Բիդեք>> ՍՊԸ-ի և <<ԳԱՄՇԻՆ>> ՍՊԸ-ի հայտերը:

2.2 Անվբավարար գնահատել <<ՍԱՍՈՒՆԱՍԱՐ>> ՍՊԸ-ի, <<Ագարակ>> ԲԲԸ-ի, <<Աբակ>> ՍՊԸ-ի, <<Վ.Վարդանյան>> ՍՊԸ-ի, <<Հիմնաքարեր>> ՍՊԸ-ի, <<Էլիտ Հիլզ>> ՍՊԸ-ի, <<Հեր-ՄուշՇին>> ՍՊԸ-ի, <<Թիվ1 Շինվարչություն>> ԲԲԸ-ի և <<Մեվրիկար>> ՍՊԸ-ի հայտերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

3.1. **1-ին** չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել <<ՄարտՇին>> ՍՊԸ-ին,

1-ին չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել <<Բիդեք>> ՍՊԸ-ին, 3-րդ տեղը զբաղեցրած մասնակից՝ <<ԳԱՄՇԻՆ>> ՍՊԸ-ին:

3.1. **2-րդ** չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել <<ԳԱՄՇԻՆ>> ՍՊԸ -ին,

2-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել <<ԱՇԿԱՐ>> ՍՊԸ –ին, 3-րդ տեղը զբաղեցրած մասնակից՝ <<Հ.Պողոսյան>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովի քարտուղարին.

4.1 Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել համապատասխան հարցումը:

4.2 Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016 թվականի ապրիլի 28-ը ներառյալ, ներկայացնել Կարգի նշված կետով սահմանված փաստաթղթերը:

4.3. Հաշվի առնելով, որ <<ՄարտՇին>> ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնի մասով ներկայացրել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ (գնային առաջարկը համարվում է չհիմնավորված ցածր, եթե այն ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից)՝ ծանուցել <<ՄարտՇին>> ՍՊԸ-ին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016 թվականի ապրիլի 28-ը ներառյալ, ներկայացնել Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված փաստաթղթային հիմնավորումներ:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Ղեկավարվելով Կարգի 49-րդ կետով՝ հանձնաժողովի նիստ հրավիրել 2016 թվականի մայիսի 02-ին, ժամը՝ 11:30-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ավետիք Ավագյան

Անդամներ՝ Աղավնի Բուդուլյան

Կարեն Մելքոնյան

Կարեն Համբարձումյան

Անահիտ Ավագյան

Քարտուղար՝ Մարիամ Հայրապետյան